Ողջու՛յն, խաղաղասե՛ր Պինգվին,

Ինձ Չիչեք (ծաղիկ) անունով ճանաչիր, որովհետև անունս ունի միայնակ ծաղիկ իմաստը: Ուրախ եմ և իմ շնորհակալությունն եմ հայտնում, որ նամակիդ մեջ ինձ հետ կիսվեցիր քո իղձերով, երազանքներով ու զգացմունքներով: Նաև ողջունում եմ քո խաղաղասիրությունը: Երանի՜ քեզ պես միլիոնավոր խաղաղասեր մարդիկ լինեին: Մենք Երկիր մոլորակի վրա կապրեինք խաղաղության մեջ ու միասին կիրականացնեինք մեր երազանքները: Ինձ խնդրել էիր, որ իմ հետաքրքրությունների մասին գրեմ: Երբևէ լսե՞լ ես ուտոպիայի մասին: Ուտոպիստական աշխարհն ինձ շատ է հետաքրքրում, եթե ժամանակակից լեզվով ասենք, անկախ կրոնից, լեզվից, ազգությունից, ռասայից՝ մարդիկ այնտեղ ապրել են շատ երջանիկ ու խաղաղ: Թախիծը, արցունքը նրանցից շատ հեռու են եղել. տեսնես եթե ինձ և քեզ պես խաղաղասեր մարդկանցով միավորվենք, կկարողանա՞նք այդպիսի աշխարհ ստեղծել:

Շատ եմ ուզում, որ մարդիկ հանգստության ու խաղաղության մեջ ապրեն: Այլևս թող չլինեն մայրական արցունքներ, կորուստ ու դառն օրեր, թող միմյանց չնայենք ոխով, վրեժխնդրության զգացումով, թող չքնենք ու չարթնանանք փամփուշտների ձայնի տակ:

Ի՜նչ ծանր բառ է «պատերազմը»: Դրա հետևանքով առաջացած ողբերգությունները չեն ջնջվում մարդկանց հիշողությունից, իսկ վերքերը երբեք չեն բուժվում:

Պատկերացնում եմ անցյալ ու ներկայիս սերունդների ապրածներն ու ծանր օրերը: Իմ ընկե՛ր Պինգվին, արի՛ միասին պայքարենք հանուն խաղաղության, որպեսզի երեխաները՝ մեր ապագան, կրկին չապրեն այդ սարսափելի անցյալը:

Ինձ հարցնում ես, թե որն եմ ավելի շատ սիրում՝ աստղե՞րը, լուսի՞նը, թե՞ արևը: Ես ամենից շատ արևն եմ սիրում, քանի օր այն բոլորի վրա հավասար է շողում:

Մոտ հարազատներիս, ընկերներիս հայրերի ու եղբայրների կորուստը նրանց հետ միասին ապրել եմ: Եվ հասկացել եմ, որ բոլորը ցավը հավասար են զգում: Աստծու կողմից մեզ պարգևած կյանքը ինչո՞ւ կարճ ապրենք: Որքա՜ն իղձեր, երազանքներ են կիսատ մնացել, որքա՜ն մանուկներ են անհայր մնացել:

Ես հավատում եմ, որ մեր ժողովուրդների միջև խաղաղություն է հաստատվելու և ինչպես դու ես ասում, ամբողջ աշխարհը կուրախանա դրա համար: Մեր բոլորի իրավունքն է, որպեսզի մեր հարազատների և սիրելի մարդկանց հետ ապրենք խաղաղությամբ, հանգիստ ու երջանիկ: Մենք շատ փոփոխություններ կարող ենք անել, կրկին սկսելու համար շատ հնարավորություններ ունենք: Եթե մի կողմ թողնենք ողջ ատելությունը, ապա կհասնենք խաղաղության: Մենք պետք է կարողանանք անել այդ:

Մի տեղից պետք է սկսել: Մենք նախկինում միասին ենք ապրել, հարևաններ ենք եղել, ես դա լսում եմ ավագ սերնդի պատմածներից ու հուշերից: Քո ասածի հետ ամբողջությամբ համաձայն եմ, այո՛, մենք պետք է միասին ապրենք և այս նուրբ արվեստը ցուց տանք բոլորին:

Իմ ընկե՛ր Պինգվին, արի՛ երկուսս էլ մեր ժողովուրդներին խաղաղության կոչ անենք, որպեսզի նրանք ապրեն երջանիկ, խաղաղ ու ուրախ: Երազանքս է, որ խաղաղության աղավնին, ծաղիկը կտուցին, միշտ սավառնի մեր երկնքում:

Ասածիդ համաձայն՝ նայելու եմ լուսնին ու քեզ հիշեմ:

Բարի մաղթանքներով՝

Չիչեք (Ծաղիկ)